

ՏԱՄՆ ԵՒ ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գին 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԱՌԱՋԻԿԱՅ 1890 ԹԻՒԱԿԱՆԻՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՎԱՆԵՐՆԵՐ ԵՒ ՔՐԱՎԱՆԵՐՆԵՐ ԼՐԱԳԻՒ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական ՀԱՌԱՎԱՆԵՐՆԵՐ՝
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրքով «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թամարիսի տանը):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ արեց «Մշակը» այս տարի. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակութիւն առանց կարծիքի. Նամակ երկանից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տարեկան գրական ազգայնականութիւնը. Արտաքին լուրեր. — ԽՈՒՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱՎԱՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՎԱՆԵՐ. Ներքին հասարակական կեանքի ուսումնասիրութեան համար.

ԻՆՉ ԱՐԵՑ «ՄՇԱԿ» ԱՅՍ ՏԱՐԻ

Այժմ երբ մինչև նոր տարին միայն ա-
միս և կէս է մնացել, պարտաւորութիւն ենք
համարում հարեանցօրէն յիշեցնել մեր
ընթերցողներին թէ ինչ կատարեց «Մշա-
կը», ինչ էր մեր լրագրի գործունէութիւնը
ներկայ տարվայ ընթացքում:
Այս տարի «Մշակը» իր առաջնորդող
յօդուածներում և ներքին տեսութեան
յօդուածներում արժանաւոր գլխաւորապէս մեր
ներքին կեանքի հարցերը, զբաղվեց մեր
ներքին խնդիրների ուսումնասիրութեամբ:
Հարցը, զիւղական բանկերի

հարցը, մեր կալուածատէրերի և զիւղա-
ցիների փոխադարձ յարաբերութիւնների
խնդիրը, մեր ինտելիգենցիայի դէպի զիւղ-
գնալու պարտաւորութիւնը, արհեստաւոր-
այն զարգացման խնդիրը, իրական սեռի
ընդհանուր և արհեստաւորաց ուսումը,
քաղաքային հարցերը և Թիֆլիս քաղա-
քի առողջապահական դրութիւնը, մեր եր-
կրի տնտեսական դրութիւնը, մեր նաւ-
թարգիւնարեութիւնը, մեր զինեղործու-
թիւնը, մեր մշակների դրութիւնը մեծ
քաղաքներում, մեր զիւղական ազգայնա-
կութեան դրութիւնը, անայնազործութեան
անհրաժեշտութիւնը մեր զիւղական և քա-
ղաքային ազգայնականութեան համար, ապա
մեր մամուլի ուղղութիւնը, մեր զբաղա-
նութիւնը, մեր երկրի հայերի և ուրիշ
ազգութիւնների փոխադարձ յարաբերու-
թիւնները, վերջապէս մի շարք քննադա-
տական յօդուածներ կոմկասեան ցուցա-
հանդէսի մասին, — հա զլրատարապէս այն
հարցերը, որոնք զբաղեցրին մեզ այս
տարվայ ընթացքում:

ԲԱՆԱՎԱՆԵՐ ԱՎԱՆ

ՆԻՒԹԵՐ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՒՄԻՆ ԶԱՄԱՐ

Գնացե՛ք միշտ ձեր դարձ գաղա-
փարների առջևից. — նրանք ձեզ կա-
յակցեն. եթէ դուք կը հետեւէք այդ
գաղափարներին, — նրանք ձեզ կը
յափառակեն. իսկ եթէ դուք այդ
գաղափարների հակառակ կերպով
— այն ժամանակ նրանք ձեզ վար
կը դուրեն:

Իրեքտ-Պիլ

Տարիներ են անցել այն օրից, երբ ես թողեցի
քաղաքը. քաղաքային աղմկալի կեանքը զգա-
ցել էր ինձ. հանգիստ էր հարկաւոր, ես հեռա-
ցայ քաղաքից, քաղաքի գաւառական աշխարհի
մի մթնին անկիւն՝ կարգի բերելու այն բոլոր
մտաւոր ու բարոյական նիւթերը, որոնք տա-
րիների ընթացքում ձեռք էին բերվել և մի
անգամ ծանրաբեռնում էին ինձ.....

Ես թողեցի քաղաքը մի առանձին բաւակա-
նութեամբ. քաղաքի աղմկալի, անհանգիստ
կեանքը և այն ժամանակ տիրապետող ընդհա-
նուր տրամադրութիւնը՝ գնալ դաւաճել, գիւղը,
մի ոյժի մէջ ձուլվելով, վիժեցին ինձ՝ քաղաքից:
Այդ ուղիղ այն ժամանակամիջոցում էր, երբ
մեր հասարակական միտքը ժողովրդականու-
թեան բորբոքում ունէր, երբ մեր մամուլը քա-
ղաքում էր թողնել քաղաքը, գնալ գիւղը, ուսում
նասիրել գաւառական կեանքը, ապրել և գործել
այնտեղ:

Բացի սրանից մեր առաջնորդողներում
մենք զետեղեցինք այս տարի վախճանված
երեք նշանաւոր մարդկանց մասին կենսա-
գրութիւններ, այն է. պրոֆեսոր Քերով-
ընէ Պատկանեանի, Ստեփաննոս Պալասա-
նեանի և երեւելի ուսուցիչ Շէդրինի կեն-
սագրութիւնները:

Սակայն մեր առաջնորդող յօդուածներից
շատերը նուիրված էին և արտաքին կեան-
քի նշանաւոր երեւոյթներին և քաղաքական
աչքի ընկնող անցքերին, ինչպէս, օրինակ,
գերմանական նոր կայսրի հայեացքները,
Աւստրիական թագաւորութեան մահը, Թիւր-
քաց Հայաստանի դրութիւնը, Պարսկաս-
տանի հայերի կեանքը, Շվեյցարիայի մի-
ջադապին դերը, Պարիզի ցուցահանդէսի
նշանակութիւնը, և այլն.....

Մեր լրագրի արտաքին տեսութեան
բաժնում մենք մեր կարողութեան չափ
հետեւեցինք եւրոպական քաղաքական և
հասարակական կեանքում կատարվող ըն-
թացիկ երեւոյթներին: Այդտեղ չէր պէտք
է մտածանք յիշել և Հայկակի Կ. Պօլսի
նամակները, որոնք մեր արտաքին տեսու-
թեան զարդն են կազմում:

Բայց «Մշակը» այս տարվայ գործունէու-
թեան ամենահարուստ և բազմակողմանի
բաժինը ներկայացնում է մեր լրագրի բա-
նասիրական բաժինը:

Այդտեղ ապկեցան այս 1889 թվ. ըն-
թացքում հետեւեալ աչքի ընկնող գրուած-
ներ. Աղայեանցի «Սէրը արտաքինում» վե-
պը, նոր լոյս տեսած «Մուրճ» ամսագրի մա-
սին քննադատութիւնը, Բաֆֆի թղթերից
մնացած «Աղայեանցի» թղթերը ուսումնասիրել
մէջ՝ գրուածքը, մի քանի յօդուածներ
Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկե-
րութեան մասին, բժշկական Տէր-Գրիգոր
Բանի (Թիֆլիսցի) «Բժշկի զրոյցները»,
Բաշինջաղեանի «Նկարչի կեանքից յիշողու-
թիւններ», Միսկանի «Սպումը Նորաստու-
կեան» վէպի շարունակութիւնը և վերջը,
Լէօի վէպը, Սարգիսեանցի բանասիրա-
կանները, ապա Ասիացու մի քանի ֆելիետոն-

ներ, «Նախկին ուսանողի յիշողութիւններ»,
«Երեւանի նահանգի տնտեսական դրու-
թիւնը» և «Գաւառական նամակներ» վեր-
նագրով գրուածները, այնուհետեւ Պարս-
կահայերի կեանքից մի քանի վէպեր, ինչ-
պէս «Մեր գաւառ», և «Քեշիշ-բաբա»,
և «Ենիշերի» և այլն..... Բացի սրանից ոչ մի
ժամանակ «Մշակի» բանասիրական բա-
ժինը այնքան հարուստ չէր օտար երկրներ-
րից՝ գրված բանասիրական թղթակցու-
թիւններով, որքան այս տարի: Մենք զե-
տեղեցինք մեր լրագրի ներկայ տարվայ բա-
նասիրականի բաժնում հայոց հասարա-
կութեան հաշուով Պարիզի Գրական միջա-
դային կոնգրէսին մասնակցելու և ցուցա-
հանդէսն ուսումնասիրելու համար Պա-
րիզ գնացած «Մշակի» խմբագրի Պարիզից
գրած նամակներն ու տպաւորութիւն-
ները, ապա Անգլիայից մի հայ երիտասար-
դի գրված հետաքրքիր նամակների շարքը,
Հ. Առաքեանի «Պարսկաստանի նամակ-
ներ» և վերջապէս Ապրիլի նամակները

«Թիւրքաց-Հայաստանից»:
Յիշեցնելով ընթերցողներին «Մշակի» այս
տարվայ կատարածը և թվով այլ և այլ
բաժինները զլրաւոր յօդուածներին անուշ-
ները, որոնք գաղափար են տալիս լրագրի
որչափ հարուստ կամ բազմակողմանի նիւթ
«Մշակի» այս տարվայ մատակարարած
նիւթերի օգտաւէտութիւնը:

Վերջապէս մեր խօսքը, պարտաւորու-
թիւն ենք համարում մեր խորին շնորհա-
կալութիւնը յայտնելու մեր այս տարվայ
թէ բոլոր աշխատակիցներին և թէ Բու-
սաստանի, արտասահմանի և գաւառական
թղթակիցներին, նրանց դէպի մեր թղթն
ունեցած ջերմ համակրութեան և նրանց
եւանդուն աշխատակցութեան համար:

Գ. Ա.

Թիւնների շարքը և այն ամենը, ինչ որ բորբո-
քում էր մեր միտքը, ինչ որ այնպէս ուժգին ա-
ռաջ մղեց մեր կեանքը.....

Այդ հասարակ, անկեղծաբան կերպով փակվեց և
մեր կեանքի մի նշանաւոր շրջանը, մի շրջան,
որ մեր նորագոյն պատմութեան ամենահետաքր-
քել երևոյթներից մէկը կը կազմի, իսկ ակնա-
տեսների ամենամիկ թարական յիշողութիւնը:

Ոչ մի ժամանակ հայոց հասարակութիւնը այն-
պէս բանասեր չէր, ինչպէս այդ ժամանակամի-
ջոցում. կեանքը մի առանձին կենդանութիւն էր
ստացել ամենուրեք, ուսումնասիրողներ թիւը ա-
ճում էր օրից օր, մամուլը պահանջ էր դառնում,
երեւին զարգացող թատրոնը՝ մի առանձին
փայլ ստանալով, սկսում էր նկատելի կերպով հե-
տաքրքրել հասարակութեան մեծամասնութեանը,
հասարակական ասպարիզում նշանաւոր տեղ է
բռնում խմբագիրը, վիպասանը զրոյցը, հրապարա-
կախօսը, ուսուցիչը, դերասանը և այն բոլոր
մարդիկ, որոնք յայտնի կապեր են ունենում մեր
մտաւոր շարժման գործին հետ:

Իսկ հիմա, երբ այդ նշանաւոր պատմական
շրջանից յետոյ տարիներ են անցել, երբեմն հ-
ոսցող կեանքի տեղ մնացել են անցեալի միմի-
թարական յիշողութիւնները միայն:

Ես հեռացայ քաղաքից յայտնի պատրաստա-
կանութեամբ, ես գնում էի գաւառը, այն աւե-
տեայ երկիրը, որի մասին երազում էր այն ժա-
մանակ մեր երիտասարդութիւնը, իսկ նրա հետ
մեր հասարակութեան մտածող մասը, գաւառա-
կան կեանքը հրապուրում էր ինձ անկարգաբե-
կերպով, ես երեւակայում էի զիւղում մի լայն
կեանք, ես կարծում էի, որ գաւառը կարող է
շարունակ հետաքրքրել և զբաղեցնել յայտնի չա-

փով ինտելիգենտ մարդուն. գաւառական կեանքի
մասին ես գաղափար չունէի: Ինձ թւում էր, թէ
զիւղում սպասում է ինձ մի համարիտ շրջան, ո-
րին ընդունված է անուանել գաւառական
ինտելիգենցիա, որ տիրապետող մտքերը,
եթէ ոչ անմիջապէս, զոնէ շատ հնչողութեամբ,
կարող են պատուաւորվել մեզ մօտ և այլն:

Գաւառական ինտելիգենցիա, այդ
բառի ժամանակակից նշանակութեամբ, մենք չու-
նենք, մենք ունենք զգիւղում տիրապետող տը-
գեաների մի ահագին մեծամասնութիւն, մենք
ունենք խաւրդալի մանր-մունր ծառայողներ
մի մեծ լեզվով, և այդ տարբեր ձգտումներով,
կեանքի տարբեր պահանջներով մարդիկ անուան-
վում են մեզ մօտ գաւառական ինտելի-
գենցիա: Եթէ դուք, ընթերցող, քիչ թէ շատ
ծանօթ էք ասիական գաւառի հետ, գուցէ հաս-
կանաք և այն, որ ասիական գաւառը և ինտելի-
գենցիան, — երկուսն ահա շատ հասկացու-
թեան են և դեռ շատ և շատ տարիներ են
հարկաւոր լցնելու այն ահագին վիճը, որը բա-
ժանում է իրարից այդ երկուսը, այժմ ծայրանդ
հասկացողութիւնները:

Բայց ես չեմ ցանկանում դառնալ սակ, որ
մեր գաւառական կեանքը չունի իր լաւ. նոյն
իսկ հրապուրելի կողմերը. ընդհակառակն, զիւղա-
կան կեանքը ունի իր առանձնայատկութիւննե-
րը, որոնք շատ բնական են և նոյնքան դուրիշ
ու յափշտակող. բայց այդ կեանքի պայմանները
այնքան ուղղ և այնքան միատեսակ են, ասում
են շատերը, որ չեն կարող շարունակ բաւակա-
նութիւն տալ մի քիչ թէ շատ կրթված, ժա-
մանակակից քաղաքակրթութեան հետ ծանօթ
մարդուն, որքան էլ նա գաղափարի և գոր-
ծի մարդ լինէր, որքան էլ նա նուիրված

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ԿՈՐԹԻՔԻ

Ամեն օր և ամենքից միշտ մի և նոյն դանգաճան ենք լսում, թէ՛ մեր ընկերութիւնները ոչինչ չեն շինում, լրացրութեան մէջ չեն գտնուում, իրաւունքները, հասարակական փողերը օր ցերեկով մաքրադարձուում են, դպրոցների հոգաբարձուները անպատասխանութիւններ են անում, երեցիները եկեղեցու փողերն է ուտում, վաշխառուները ծծում են խեղճերին և այլ այդպիսի անվերջ դանգաճաններ... Այդպիսի դանգաճաններով աջ և ձախ դիմողները մեր հասարակութեան անդամներն են, նոյն իսկ ամբողջ հասարակութիւնն է։ Տարաբաղդաբար այդ հասարակութիւնը միայն թող կնոջ նման դանգաճուի և հիւանդի նման արտաբերի զիտէ, — ուրիշ ոչինչ։

Այդ խղճուկ հասարակութիւնը, ճշմարիտ է, գանգատվում է հասարակական գործիչի դիմակի տակ ծածկված աֆերիստների, եկեղեցու փողեր կլանող երեցիների, հասարակական փողեր մաքրադարձող բաղդաճիւղիների, տպագրական խոսքը սպառնալի միջոց դարձրած գաղթականների, սրա նրա արիւնը ծծող վաշխառուների և ամեն մի լաւ գործի արգելք հանդիսացող արարածների դէմ, — բայց գանգատվում է և տրտնջում հանդերձ, նոյն հասարակութիւնը մոռանում է, որ այդ բոլոր հեղաշուտ տիպերը, այդ բոլոր արարածները իր ծնունդն են, իր միջոց են դուրս եկել, ուրեմն և նրանց զարգացումը արարածների վերջ տալու, կամ գէթ այդ արարածները սահմանափակելու պարտքը մեծ մասամբ, էթիկ չափերը ամբողջովին, իր, այսինքն այդ հասարակութեան վրա է ընկնում։

Անդադար լսում ենք հետեւեալը. «այս ինչ ընկերութիւնը ոչինչ չէ շինում, հոգաբարձութիւնը գործ չէ կատարում, երեցիները անպատասխան են, այս ինչ հասարակական գործը աֆերիստ է, այս ինչ մարդը անխելճ վաշխառու է, և այլն։ Դատ լաւ բայց, ասացէ՛ք խնդրեմ, ո՞վ է ընտրում եկեղեցու փողերը կլանող երեցիներին, ո՞վ է ընտրում ընկերութիւնների համար ոչինչ չը չինող զեկավարներին, ո՞վ է օտի վրա կանգնած մնալու ոյժ տալիս հասարակական գործիչի դիմակի տակ ծածկված աֆերիստին, ո՞վ է ընտրում դպրոցների համար անպատասխան հոգաբարձուին, և վերջապէս ո՞վ է չողորմորով հարուստ վաշխառուին, էթիկ ոչ այդ նոյն հասարակութիւնը միայն, էթիկ ոչ այդ հասարակութեան ամեն մի անդամը առանձին-առանձին։

Մենք մի վայրկեան անդամ չէինք մեղադրի այդ հասարակութիւնը, էթիկ նա, այդ հասարա-

կութիւնը այն համոզմունքին լինէր, որ այս ինչ կամ այն ինչ ընկերութեան գործունէութիւնը աւելորդ է, կամ թէ երեցիները իրաւունք ունենան եկեղեցու փողերը, կամ թէ հասարակական փողերի իրացնելը յանցանք չէ, և կամ, վերջապէս աֆերիստութիւնը, սրա նոր տուն բանդելը — մի յանցանք չէ, այլ աշխարհային մի օրէնք։ Այո, մենք այդ տեսակ հասարակութիւնը երբեք չէինք մեղադրի։ Սակայն երբ հասարակութիւնը և նրա ամեն մի անդամը առանձին-առանձին կրկնում են թէ հասկանում են, որ մամուլը աֆերիստութեան տեղ չէ, որ չէ կարելի հասարակութեան հիմնարկութեան մէջ մտնել և ոչինչ չը չինել, որ անկարելի է հասարակութեան փողեր ուտել, որ վաշխառութիւնը և այլ այդպիսի պարագայութիւնները հասարակական տեսակէտից անտրեղի յատկութիւններ են, և ի՞նչ է այդ բոլորը հասկանալով՝ այդ նոյն հասարակութիւնը ոչինչ չանք չէ գործ դնում առանձնացնելու կամ ուժեղացնելու անկողնային տեսակ հրէշներին և վիճակարար արարածներին, — կը նշանակէ, որ այդ հասարակութիւնը կարծիքից, համոզմունքից և բարոյական օր և է սկզբունքից դուրս անհասկանալի մի հաւաքածու է։

Համոզմունքից և սկզբունքից դուրս այդպիսի հասարակութեան մէջ չէ գործում այն մեծ ոյժը, որը կոչվում է հասարակական կարծիք, և որը միայն կարող է սահմանափակ ամեն տեսակ անբարոյական և վիճակարար անձանց։ Բայց քանի որ չը կայ այդ աղիւս հասարակական կարծիքը, քանի որ հասարակութեան իւրաքանչիւր անդամը շատ-շատ միայն քուռը ու պոճախներում տրտնջող զիտէ, քանի որ այդպիսի հասարակութեան մէջ ամենքը խաբարով ձեռք են մեկնում սրա նրա տունը քանդող վաշխառուին, քանի որ դպրոցի վիճակարար հոգաբարձուն նորից ընտրվում է, քանի որ եկեղեցու փողերը կլանող երեցիները միշտ իր պաշտօնի մէջ է մնում, քանի որ հասարակական փողերը ուտողից շատերը իրանց երեսը չեն դարձնում, քանի որ այդ տեսակ աֆերիստների չին արտաքինում հասարակական շրջաններից ու կլուքներէից, — հարկէ, այդպիսի հասարակութեան մէջ բարոյական հրէշները ոչ թէ միայն չեն պակասել, ոչ թէ միայն չեն նուազել, այլ, ընդհակառակը, կաւելանան և օրից օր կանան... Եւ այդ լաւ հասկանալի է, երբ հասարակութիւնը անպատիժ է թողնում հասարակական փողեր ուտող մէկին, և հարկէ, նրա օրինակին կը հետեւի մի ուրիշը, երբ մի վաշխառուն ոչինչ պատիժ չէ ստանում հասարակական կարծիքից, ի հարկէ, հանդէս կը դառն անվերջանալի վաշխառուներ, երբ վերջապէս անդործ հոգաբարձուն, փողակեր երեցիները, ամեն մի լաւ գործի արգելք հանդի-

սացողը, ընկերութեան քնած զեկավարը և ամեն այդ տեսակ բարոյական հրէշներ անպատիժ են մնում։ Հասարակական կարծիքի կոլոմից, — հարկէ, այդպիսիների թիւը փոխանակ պակասելու, կաւելանայ...

Ուրիշ կերպ չէ էլ կարող պատահել այդպիսի հասարակութեան մէջ, որը զուրկ է կարծիքից և համոզմունքներից, որը իր յոյսը, Ալիա՛նը դիտէ ինչի վրա դնելով, ինքն ոչինչ չէ անում, և կարծում է, որ օղային մի ձեռք զեկական զօրութեամբ կը բռնէ իր անտրեղ և կը պատժէ իր մէջ գոյութիւն ունեցող բարոյական հրէշներին...

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 2-ին

Երևանը խոնաւ է. նրա օդը և ջուրը վատաւոր չեն, հետեւապէս բնակիչները իրանց կաղմութեամբ նման են կլիմային, այս ակսիոմա է։ Առողջապահութեան ամենալիցաւոր պայմանն է մաքրութիւնը, այս էլ ակսիոմա է։ Բայց երևանը էթիկ սանձը, իր կեղտոտութեամբ կանգնած է անհասկանալի աստիճանի վրա, որ իր այդ յատկութեամբ երևանը գերազանցող է շատ քաղաքներից, այս ես ակսիոմա է։

Ճիշդ որ երևանը իր կեղտոտութեամբ շատ և շատ յետ է և սրա նպատակը բաւական են հետեւալ փաստերը։ Փողոցները և հրապարակները ծածկված են փոշու մի այնպիսի հաստ շերտով, որ մարդու կոշիկները ամբողջապէս թաղվում են մէջը, իսկ սրանից բարձրացած թողը, երևակայել կարելի է, նկարագրելով քիչ էլ Տնտեսական կրթական ինստիտուտի (ԹԻՆԻՍ) յայտարարել են անուշադիր (թէ երբեմն յայտարարել են մաքրել բակերը, բայց բաւականացել են միմիայն խոսքով)։ Փողոցները վարվում է խմելու ջրի առուակների հետ այնպէս, ինչպէս խոյը լըճացած, հոտած ջրերի հետ։ Առանց իր կեանքին ախտաւար, իր դրացիի պատիւը ճանաչելու, իրաքանչիւր տանիքին կեղտոտութեան ամանները, գանաղան գզեմները, կեղտոտ աւելը, նոյն իսկ ծծկերի կղկղանքը մաքրում է նոյն առուի մէջ, որտեղից ինքը ջուր է խմում։ Թինս անգամ ախտաւոր եմ եղել, երբ ծառան բակը աւելելով կեղտոտութիւնները լցրել է նոյն առուի մէջ (որպէս զի ջուրը իր հետ տանի) որտեղից խմելու ջուր են վերցնում հազար մի ընտանիք, և էթիկ մեր ժողովուրդը դեռ տգիտութեան այն աստիճանի վրա է կանգնած, որ չէ ճանաչում և չէ ախտաւոր ոչ իր և ոչ էլ դրացիների պատիւն ու կեանքը, զոնէ քաղաքային խորհուրդը իր պարտաւորութիւնը ճա-

նայէր և խիստ կարգադրութիւններ անէր արանց դէմ իսկ ամենապաշտ ընկնող կեղտոտութիւնները ահա թէ որտեղ են գտնվում։ Բաղադրանայի ետեւում գտնված փառանքները բաւական են, դեռ մի կողմ թողած այն զգուշիւ և զարշնչի հոտը, որը փչում է դեռ հեռուից, մարդու ներկայանում են, մի քանի շարք խանութների վրա լատակներ՝ կեղտոտութիւնների և կղկղանքների կոյտերով լի և այդ կեղտոտութիւնները գտնվում են մի այնպիսի տեղում, որի մօտով իւրաքանչիւր օր և իւրաքանչիւր ժամ անցնում է մեր միակ վաճառական դասակարգը, որի հոտառութեանը առաւ պաշար է մատակարարում, բայց և այնպէս այդ բոլորը մնում են նոյն դրութեան մէջ՝ ինքնիշխան օրէնքի համաձայն։ Եւ էթիկ երբեմն այդ բաների վրա ուղադրութիւն են դարձնում, դարձեալ մի մեծ բարիք արած չեն լինում մեր քաղաքի հոգաբարձուները։ Ահա թէ ինչպէս հրամայում են մաքրել հրապարակի փոշին, գալիս են մշակները սրբում և կուտակում, բայց մինչև վերադառնալով գալիս են կուտակել և իրանց անիւների հետ նորից շաղ տալիս հրապարակի վրա և նորոգում նոյն փառաւոր տեսարանը։ Եւ այս բոլորից յետոյ ուրեմն դարմանալի չէ, որ բացի սովորական հիւանդութիւնների, որպիսիք են՝ թոքախտ, բարակաւում, զոդ, տաքութիւն և այլն, մի և նոյն ժամանակ իւրաքանչիւր տարի յայտնվում են մեզանում մի քանի տեսակ տարափոխիկ հիւանդութիւններ և համարեալ իւրաքանչիւր տարի էլ անխտիր տանում են առատապէս իրանց հունձը, թողնելով շատ ընտանիք տղի և կսկծի մէջ։

Այս բոլոր չարիքների և թշուառութիւնների առաջն առնելու միակ միջոցն է մաքրութիւնը, այդ պատճառով էլ պէտք է պատուիրել խտրութիւնները, իւրաքանչիւր տան տիրոջ իր տան թէ փողոցի մասը և թէ բակը մաքուր պահել, ոչ մի կեղտոտութիւն չը թողնել և առաւօտ ու երեկոյ ջուր սրկել։ Նոյնպէս պատուիրել խտրութիւնը դարձեալ իւրաքանչիւր ընտանիքին, ջուր խմելու առուները պահել մաքուր, ոչ մի բան չը մաքրել նրանում, և վարվել այդ առուների հետ այնպէս, ինչպէս վերցնելու այն բոլոր կեղտոտութիւնները և կղկղանքները կոյտերը, որոնք գտնվում են Բաղադրանայի ետեւում, կամ ուրիշ խոցով քաղաքի կենտրոնում և արգելել այդ-եւ այդպէս այնպիսի խտրութիւն մաքուր պահելու այն քաղաքաբանները և իշկանները, որպիսիք են Գիրքին, Արարդկա անուանված տեղում զբոսնականները, խոտի մայրանի շուրջը գտնվածները, և այն ընտանիքներին, որոնք կուտակում են նա ընտանիքների, որոնք կուտակում են նա ընտանիքները իր պարտաւորութիւնը վերականգնեցնել, շատ

լինէր ժողովուրդի պէտքերին ծառայելու խնդիրն։ Թէ՛ որքան ուսումնասիրելու նիւթ է պարուհաւում մեր գաւառական կեանքը և թէ՛ որքան անհրաժեշտ է այդ կեանքի ուսումնասիրելը, այստեղ պէտք չը կայ պարզելու. այդ խնդրի մասին չափ է խոսադրելու ու գրվել և այդ հարցը քննելով է աւելի քան հարկաւոր էր, մի կէտ միայն կայ և շատ նշանաւոր, թէ որքան հեշտ է իրաւորոնք այդ պէտքը և թէ ինչ պայմաններին մէջ է գտնվում մեր երկրի ուսումնասիրութեան գործը, գաւառական ինտելիգենցիայով հանդերձ, դա մինչև այժմ ոչ թէ պարզված, այլ նոյն իսկ յաւելցված էլ չէ։ Այդ հարցի վճռիցն է կախված և այն խնդրի լուծումը, թէ ինչպէս մեր գաւառի ուսումնասիրութեան գործը այնքան դանդաղ քայլերով է ընթանում և թէ ինչպէս, վերջապէս, մեր ինտելիգենցիան խորշում է գաւառից և մեր գաւառական կեանքը մնում է նոյն վաղմիւ, անմշակ դրութեան մէջ։

Մենք անձամբ ճանաչում ենք բժիշկներ, իրաւաբաններ, բարձր ուսում ստացած ուսուցիչներ, կրթված և լուսաւորված մարդիկ այլ և այլ պրոֆեսիաների, որոնք իրանց բոլոր եռանդուն ձեռքառումներով հանդերձ, չեն կարողացել երկար ժամանակ մնալ գաւառում, մեր գաւառի կեանքը ճնշել է նրանց, մեր տեղական կեանքի պայմանները բռնաբարել են նրանց մէջ այն իղէլայական զգացմունքները, որոնք երբեմն այնքան ուժեղ և քաղաքից մղում էին նրանց զէպի դիւղը։

Կրթված, լուսաւորված մարդը մեղ մօտ մտքի օտգիւն է, նրա գրութիւնը մեր գաւառում ծանր է, գաւառը մտնելու օրից նա գրեթէ կտրում է իր յարաբերութիւնները այն ամբողջութեան հետ, որի մի մասն էլ ինքն էր կազմում. նրա

մէջ հանգչում են, աստիճան առ աստիճան, այն ձգտումները, որոնք երբեմն նրան իր թեկնի տակն առած այնքան սրընթաց տանում էին մտքի լայն տարածութեան մէջ։ Նա սկսում է ծառաւել դարձնալ իր սովորական կեանքով ապրելու համար, դաշխաւորել մի պատահական հնչիւն, մի կրթված մարդ, որը երբեմն որպէս ճանապարհորդ հանդիպում է նրան, նորոգում են նրա սրտի մէջ հին կեանքի յիշողութիւնները, — գիւղը, իր բոլոր պոէզիայով հանդերձ, որ երբեմն նրա իմօք էր, սկսում է ծանրանալ նրա բարոյական աշխարհի վրա, նա միջոցներ է որոնում թողնել գիւղը, երբեմն փայփայած մտքերը անտանելի լուծ են դառնում նրա համար և նա երեսը դարձրած ամեն բանից, որը երբեմն այնքան զրուսում էր նրան, շտապում է փախչել դաւառից և խորատուգլի դարձնալ այն վաղմիւ, իր ծանօթ կեանքի մէջ, ուր հասկանում են նրան, ուր ինքն էլ ամենքին հասկանում է... Եւ այդ բոլորը խօսքեր չեն, ընթերցող, այլ փաստեր, որոնք կատարվել են մեր աչքի առաջ։

Ինչ կը նշանակի այդ...

Բայց այդ բաղադրար էլքը շատ փոքր թիւի վիճակն է. գաւառը թողնում, հեռանում է միայն կամ և բարոյական մեծ ոյժ ունեցողը, իսկ մնացածը կուլ է դնում ընդհանուր հասանքում, գաւառական կեանքը մոռացնել է տալիս նրան այն բոլոր երազները, որոնք բերել են նրան այդտեղ, նա աննկատելի կերպով կտրում է բոլոր կապերը իր անցեալ ծանօթութեան, կեանքի հետ, նրան սկսում է ոչ մի բան այլ ևս չը հետաքրքրել և նա խառնվում է այն ամբողջութեանը, որի պէտքերը ուսումնասիրելու, օգնելու համար էր եկել։

Ինչ կը նշանակի այդ, — կրկնում ենք...

Մենք աւելի քան հաւատացած ենք, որ այս ամբողջը կը յուզեն շատերին, — բայց ինչ արած, դա իրականութիւն է։

Տան և էթիկ տարի շարունակ «Մշակը» հրաւիրում է հայ բժշկին, հայ իրաւաբանին, հայ տեխնիկին գնալ գաւառը, դիւղը, մեղ միշտ ասելով, որ դիւղը ինտելիգենցիայի մեծ պէտք ունի, որ նրան սպասում են այնտեղ, որ մեր կեանքի առաջադրութիւնն այդ բառի լայն հասկացողութեամբ, կարող ենք ապասել այն ժամանակ միայն, երբ մեր հիւանդներին կը բժշկի մեր բժիշկը, երբ մեր դատը կը վարի մեր փաստաբանը, և այլն և այլն... Այդ միշտ և միշտ կրկնվող հրաւերը 80—83 թվականներում կատարելապէս յուզում է մաքրել, նրան հետևում է մեր հասարակութեան ամենալաւ անձերը, նրան հետևում է միշտ յափշտակվող երիտասարդութիւնը...

Այժմ արդէն պարզված խնդիր է, թէ որքան ուսումնասիրելու նիւթ կայ մեր գիւղում, թէ ինչ դրութեան մէջ են մեր գործերը, թէ որքան պէտք է կրթված անձեր միջամտութիւնը այդ գործերում, և այլն։

Բայց ո՞ր է մեր երիտասարդութիւնը, ո՞ր է այն բացառական ամբողջութիւնը, որը երբեմն ամեն բան մոռանալով այնպէս յափշտակված ձգտեց զէպի գաւառը... Այդ կեանքով, ամենափայլուն ցանկութիւններով, տէրիքային մէջ անխորտակելի յոյսերով լի փողերի մասսայից մնացել են այժմ յիշողութիւններ միայն, այո, միայն յիշողութիւններ...

Եւ այդ արևուր յիշողութիւններից յետոյ չը մոռանանք ամենաախարհին, և այդ այն է, որ մեր ինտելիգենցիան գաւառի մասին գաղափար չու-

նի, դիւղում գործելու համար մեծ գործնական պատրաստակամութիւն է պէտք։ Տեսականից դէպի գործնականը անցնելով և այդ անձանօթ աշխարհում երես առ երես կեանքի դառնութիւններին հանդիպելով, դուք հիասթափվում էք, դուք անսխալապէս զգում էք ձեր բոլոր անխորտակելի և երկար տարուբերվուց յետոյ, կամ թողնում, հեռանում էք դիւղից, գաւառում կան կեանքի մասին ամենամանախառնակ յիշողութիւններ տանելով ձեզ հետ, կամ, փոքր առ փոքր ընտելանալով իրերի դրութեանը, թող ներքի ինձ նկատել, նոյն հասարակութեան ամենամանախառն անդամ դառնում։

Այդպիսի վիճակ ունեցաւ մեր երիտասարդութիւնը, մեր յոյսը, և չը նայելով բոլոր նպատեցողից պայմաններին, մենք չը կարողացանք ունենալ գաւառում հասարակութեան յայտնի դասակարգ, որը երկրի զեկը իր ձեռքը առնելով կարողանար ուղղութիւն տալ մեր ծնող կեանքին, մենք չունեցանք գաւառական ինտելիգենցիա, մեր երիտասարդութեան յայտնի տոկոսը փչված յոյսերով սկսեց դարձեալ կենտրոնանալ քաղաքներում. նուազեց և այն զինվական ոյժը, որը երբեմն այնպէս տրոփեցնում էր շատերի սիրտը։

Մեզ մնում է դիմել զէպի ժողովուրդը ոչ թէ զգացմունքով միայն բռնաւարով, այլ խելքով միտմութեան առաջնորդութեամբ, և հաստատաւ տեղեկութիւններով ու դրական նախադասութեան թեմատ։ Այն ժամանակ մեր առաջ կը ներկայանայ անկասկած ուրիշ տեսարան, և արդիւնքն էլ անհամեմատ մեծ կը լինի...

Ս. Ղորղանեան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՏԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ. 16 նոյեմբերի 1 խփանդիայի նա-
հանգապետ տեղակալը եւ ներքին գործերի մի-
նիստը, իրգայի քաղաքային վարչութեան ան-
դամ, ստատսկի սովետնիկ ֆոն Լատինգենի կա-
ռավարութեան տեսակետից անբարեկոյտ գործո-
ղութիւնների մասին, և այն անտեղի դատողու-
թիւնների մասին, որ յաճախ տեղի են ունենում
այնտեղի զուգայում Համեմատ ներքին գործերի
մինիստրի այդ մասին արած ամենահպտակ
զեկուցման, Թագաւոր կայսրը բարեհաճեց Բար-
ձրագոյն հրամայել. իրգայի քաղաքային, ղեկստ-
վիտելնի ստատսկի սովետնիկ ֆոն-Լատինգենին
միջնալ քաղաքային զուգայում տեղի ունեցող
անտեղի դատողութիւններին առաջն առնելու մի-
ջոցներ ձեռք չառնելու համար խիստ կերպով
յանդիմանել, իսկ քաղաքային վարչութեան ան-
դամ ստատսկի սովետնիկ ֆոն-Լատինգենին հե-
ռաջնել ոչ թէ միայն քաղաքային վարչութեան
միջոց, այլ և քաղաքային հասարակական հիմ-
նարկութիւններինց առհասարակ, արգելելով որ նա
ապագայում մանր հասարակական պաշտօնի մէջ
Լրագրութեանը իբրեւ լուր հաղորդում են, որ զիւ-
ղատնտեսական միջոցների գին ընկնելու առիթով
կազմած յանձնաժողովը մշակել է մի նախագիծ՝
անայն կենդանիների ընդհանուր պետական ա-
պահովագրութեան, կառավարութեան մասնակի-
ցութեամբ և աջակցութեամբ: «Денъ» լրագրի
հաղորդում է, որ պետական խորհրդին ներկայա-
ցնվելու է մի առաջարկութիւն, որը վերաբերում
է եկեղեցական-միական դպրոցներին մի յայտնի

զուգար տալուն՝ այն նահանգներում, ուր չը
կան գեմատիւնների հաստատութիւններ:
Նիւ-ԵՐՈՒԿ. 16 նոյեմբերի Մաստաշուստի նա-
հանգում, Լիննում, հրգեհո ոչնչացրեց քաղաքի
մեծ մասը: Այրվեց 12 թաղ. միասը—10 միլիոն
դոլլար:

ՐՕՍՏՈՎ. 16 նոյեմբերի Դոնը սա-
ռեց. նաւագնացութիւնը դադարեց:

ՂՐՁԼ-ԱՐՎԱՏ. 16 նոյեմբերի երբ զենեքալ
Մաթվէկով օֆիցըրներով կերկի էր, և դաշտային-
ղնուտութեան շրջակայութիւն էր անում, բուխա-
րա-աւգանական սահմանագիծը Բոսազա գիւղից
զենեքալի մօտ եկաւ աւգանական պահակա-
տան զինուորը՝ մի օֆիցըր արտայայտելով այն
բարեկամութիւնը, որը տաժում են Արդուրանման
էմիրը և աւգանցիները ղէպի ուսանելը, և խնդ-
րեց ընդունել ուսելիքներ օֆիցըրների և կերա-
կուր ձիաների համար:

ԲՐԻՍՏՈՎ. 16 նոյեմբերի երբ առեւտրականնե-
րը յայտնեցին իրայտ կրող բանւորներին, որ նը-
րանց կարճակեն, եթէ նրանք կը մերժեն բա-
նելու օտար բանւորների հետ, նաւամատոյցների
բոլոր բանւորները, մինչև 4,000 հոգի, այսօր
գործադուլ արեցին: Այդ գործադուլին կը հետե-
ւեն և միւս նահանգների բանւորները: Նաւերից
ապրանքի դուրս տանելը միանգամայն դադարել
է:

ՎԻԵՆՆԱ. 16 նոյեմբերի Լանդեր-բանկի վար-
չութիւնը խնդրեց ներկայացրեց ֆինանսների մի-
նիստին, առաջարկելով որ թոյլ տրվի Վիեննայի
բոսայում գնահատել և ծախել բոլորական փո-
խառութեան օրվադրանքներ:

Խմբագիր-հրատարակող-ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿՐԵԴԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ցանկացողներին կապուով վերցնել Գենեքալ
ՏԵՐ-ԱՍՏՈՒՐՈՎԻ նախկին ԿԱՌԱՄԻՐ, որը գտնվում է Երևանում հրապարակի վրա,
Պուշկինայա փողոցի և Միջին-փողոցի անկիւնում: Պայմանագրերը կարելի է կարգալ
Ընկերութեան վարչութեան մէջ ամեն օր, առաւօտեան ժամը 11-ից մինչև 1-ը կէսօ-
րից յետոյ: Ցանկացողներին յայտարարութիւնները այդ մասին կընդունվեն մինչև զեկ-
տեմբերի 5-ը ներկայ տարվայ, Ընկերութեան վարչութեան մէջ, Սերգիևսկայա փողո-
ցում: Ամիրազովի տանը:

2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ, մտնելով Կ. ՊՕ-
ԼԻՍ, ՍԱՄՍՈՆ և ՏԻՄԻՔՈՎ:
Երթևեկութիւնը շոգնաւորի 1889 թիւ վերջին քաղաքի համար փոխված է, սկսած հոկտեմբերի
11-ից. այդ փոփոխութիւնը վերաբերում է Բաթումից շոգնաւորի դուրս գալուն, որը նշանակված
է չորեքշաբթի օրերը, երկու չարաքի մի անգամ, փոխանակ հինգշաբթի օրերը:

ԲԱՌՈՒՄԻՑ ԴՈՒՐՍ ԿԸ ԳԱՆ

11	Հոկտեմբերի շոգնաւոր	«ՄԻՆԵՐԵԼԻԱ»
25	»	» «ԱՐՄԵՆԻԱ»
8	Նոյեմբերի	» «ԱՆԱՏՈՒԻԱ»
22	»	» «ՄԻՆԵՐԵԼԻԱ»
6	Դեկտեմբերի	» «ԱՐՄԵՆԻԱ»
20	»	» «ԱՆԱՏՈՒԻԱ»

Տեղեկութիւնների համար ճանապարհորդների և բեռների մասին պէտք է զմեկ Ընկերութեան
ազդաններին:

Թիֆլիսում. պ. ՐԸՆՈՒՆ. նախկ. Արժուտու գաղէրայում, № 14.

Բաթումում. պ. ԳԱՐԱՆԻՕՆԻՆ, Նախկ. Ժայռայում:

3—3 (Կ. շ.)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՐԱՐԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր

ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

ՐՈՒԿՈՎԱԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ԿԻՆԻՐԻՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆՑ—11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԵՆԿԻՆՎԱԿԻ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի ց. և սիֆիլիսի (միլարուժ. և առամացալի)
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթի և կիրակի, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. բացի կիրակի:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱՐՍՄԱԿԻ—5 1/2—7 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երեխայոց և ջղային ց. (էլեկտրոտերապիա):
ԲԵՆԿԻՆՎԱԿԻ—7—8 ժամ.

Հիւանդանոցում են մանկաբարձուհի ԵՐԻԿԱՆԵԱՆ և ԱՐՏԱՂԵԱՆ:
ճար—50 Կ.: Համախորհրդի (Կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:

Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ ՐՈՒԿՈՎԱԿԻ

ԼՈՒՄԱՅԻ «ԿՈՂՈՊՏՎԱԾ ԵԿԵՂԵՑԻ» վէպը վաճառվում է Թիֆլի-
սում—Կենտրոնական գրաքաճառանոցում և Բագու—Կասպեան գրաքաճառանոցում:
Գինն է՝ 1 ռուբլի: Գիրքը ձեռք բերել ցանկացող օտարաքաղաքացիք կարող են դի-
մել և այս հասցեով՝ Тифлисть, Типография канцел. Главноначальствующаго,
Сергѣю Симоновичу Назаряну.

2—10 (շ.)

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1889 Г

ЕЖЕМЕСЯЧНОГО ЖУРНАЛА

„СЕМЕЙНАЯ БИБЛИОТЕКА“

Редакцией „Пантеона Литературы“ предпринято, съ 1 января 1890 г., издание нового общедоступнаго какъ по
цѣнѣ, такъ и по содержанию ежемѣсячнаго журнала.

„Семейная Библиотека“ будетъ заключать въ себя: избранные романы, повѣсти, рассказы, собранія стихотво-
реній извѣстныхъ писателей, драматическія произведенія, путешествія и пр.

Въ каждомъ томикѣ будетъ помѣщено цѣлое произведение; болѣе обширныя произведенія займутъ нѣсколько
послѣдовательныхъ томиковъ.

Назначеніе „Семейной Библиотеки“—доставить самой небогатой семьѣ возможность, за ничтожную плату,
имѣть библиотечку избранныхъ авторовъ, чтеніе которыхъ по содержанию своему было бы для всѣхъ доступно и ин-
тересно.

ПОДПИСКИ ЦѢНА: съ дост. и перес. на годъ 2 р., 6 мѣс. 1 р., 1 мѣс. 25 к.

Подписка принимается: въ редакціи „Семейной Библиотеки“ въ С. Петербургѣ, Захарьевская ул., д. № 19.

Книгопродавцамъ дѣляется уступка въ размѣрѣ 5%.

Редакторъ-издатель А. Чудиновъ

2—5

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

(ՄԵՍՍՈՎՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԻԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ:
Ուրբաթ, 24 նոյեմբերի ԲԱՌՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգնաւոր ERYMANTHE
(ԵՐԻՄԱՆԹԵ) նաւապետ MERLIN (ՄԵՐԼԵՆ), մտնելով Կ. Պոլիս, Պորտ-Վաշու և Լակալալ:
Ազգանունը՝ ԲԱՌՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍՍԵՆՅԵԻ, Թիֆլիսում ԳԻՈՐԳ ՀԵՋՈՒՐԵԱՆ
ՀԵՋՈՒՐԵԱՆՑ, իսկ ԲԱՌՈՒՄԻ մէջ ԳՕԼԴԼՈՒՍ:

1—2

Մի հայ ԵՐԻՍԱՍԱՐԴ, որը արտասահմանեան մի դպրոցում ուսում առած
է, որը հմուտ է անգլիերէն, ֆրանսերէն, հայերէն և թիւրքերէն լեզուների, ցանկա-
նում է Թիֆլիսում կամ յիշեալ լեզուների մասնաւոր տներում դասատու լինել, կամ
որ և է առեւտրական հիմնարկութիւններում հաշուապահութեան և օտար լեզուների
գրագրութեան պաշտօն վարել:

Հասցէի համար դիմել կամ „Մշակի“ խմբագրութեանը, կամ պ. Ալեքսանդր Ստե-
փանեանցին, Ջուբալովի քարվանսարայում:

10—10

ՍՍԱՑՎԱԾ ԵՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ

(ԹԱՄԱՄՇԵՎԻ ՔԱՎԱՆՍԱՐԱՅՈՒՄ)

Անգլիական մահճակալներ, Թամբեր, ամաններ, կարպետներ, սապօն, գրչահա-
տներ, մկրտներ, ածիրներ, մատուցարաններ, պատրոններ, զիւզանք (3 ռ. հարկւրը),
կէնեկա, արտաքնոյցների համար թուղթ, զլեխ և շորերի վրձիններ, բիսկիւտներ, թէյ,
թէյամաններ, զրիչներ, մազերի վերանորոգիչ Մակ-Մաստեր և այլն:

2—10

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՒՍԻ հրաման համաձայն արա-
նով հրաւիրում են ՀԱՒԼԱՔԱՐԻ ՇԱՄԳՈՒՅԵՐՈՑ Ս. ԱՍՏՈՒԱՍԻՆԵՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՃԱ-
պատու ծխական ժողովուրդներին շորհ բերել նոյն եկեղեցու արական գրչա-
րոցի դահլիճը, կիրակի նոյեմբերի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին
կատարելու Շամքոռեցոց եկեղեցու ՆՈՐ ԵՐԵՑՓՈՒԱՆԻ ԵՒ ՀԱՇՈՒԱՅԵՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒ-
թիւնը ս. պատարագից յետոյ:

Վերատեսուչ բարեկարգութեան եկեղեցիների հայոց Հաւարարի Աշոտ Բա-
հանայ Թէմուրազեանց:

2—2 (Հ. Շ.)

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1890 Г.

(ТРЕТИЙ ГОДЪ ИЗДАНИЯ)

„ПАНТЕОНЪ ЛИТЕРАТУРЫ“

ЕЖЕМЕСЯЧНЫЙ ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛЪ.

Въ предстоящемъ году „Пантеонъ Литературы“ будетъ издаваться по прежней программѣ и при участіи
прежнихъ сотрудниковъ.

Въ числѣ произведеній, предназначенныхъ къ помѣщенію въ первыхъ книжкахъ журнала, назовемъ слѣд.: 1) Полное собраніе сочиненій Василя Петровича Водкина, автора „Писемъ объ Испаніи“ и пр., 2) Поэмы Оссіана,
перев. съ примѣт. и предисловіемъ Е. В. Балобановой, 3) Письма темныхъ людей, перев. А. И. Карпиничкова, 4) Чосеръ, Кентербрийскіе рассказы, перев. М. И. Кудряшева, 5) Аріосто, Ненстойный Роландъ, поэма, перев. С. Ф. Уварова, 6) Н. Майкова, Материалы для біографіи Вал. Н. Майкова, 7) М. Гюйо, Современная эстетика, и мн. др.

ПОДПИСНАЯ ЦѢНА: Съ дост. и перес. на годъ 8 р., 6 мѣс. 5 р., 1 мѣс. 1 р.,

Выписывающіе „Пантеонъ Литературы“ за 1888 и 1889 гг. уплачиваютъ: за всѣ три года—20 р., за два
года—15 р. Разсрочка платежа—по соглашенію.

Подписка принимается: въ редакціи журнала „Пантеонъ Литературы“ въ Спб., Захарьевская, д. 19, а также
въ книжныхъ магазинахъ „Новаго Времени“ въ С. Петербургѣ, Москвѣ, Харьковѣ и Одессѣ. Книгопродавцамъ дѣ-
ляется уступка въ размѣрѣ 5%.

3—5

Редакторъ-издатель А. Чудиновъ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՒ ԿՈՂՎԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՅՈՒԱՆՈՑՆԵՐՈՒՄ

Վաճառվում են պահպանեցրած գնորդ ԲԱՐՍԵՂ ՔԱՄԱԼԵԱՆԻ հետեալ հրատարակու-
թիւնները:

ՀԱՄԼԵՏ

Ողբերգ. գիրք 60 կող.

ԷԼԻԶԱՅԻ ՎԻՇԵԸ

Գիրք 10 կող.

ԷՄՄԱՆՈՒԷԼ ՄԱՆԻԻ ԹԱՂՈՒՄԵՆ

Գիրք 5 կող.

Այս գնորդ վաճառվում են միմիայն Թիֆլիսում:

6—6